

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

NN ը/կ	Հիմնավորումներ
	<p><b>Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</b></p> <p><b>Երիտասարդական քաղաքականության մասնակցային գործընթացի խթանում և զարգացում</b></p> <p><b>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</b></p> <p>Միջազգային փորձը վկայում է, որ երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետությունը որոշակիորեն պայմանավորված է երիտասարդական աշխատանք իրականացնող, երիտասարդության հարցերով զբաղվող անհատների՝ ոլորտին առնչվող մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակով: Հայաստանում այսօր դեռևս գոյություն չունի երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգ, մինչդեռ երիտասարդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներգրավվածության աստիճանի բարձրացման, վերջին հինգ տարիների բարեփոխումների արդյունքում ոլորտում ակտիվացած հասարակական կազմակերպությունների սեկտորի, անհատ երիտասարդների գործունեությունը բարելավելու, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է երիտասարդական աշխատողի ինստիտուտի ներդրումն ու կայացումը:</p> <p><b>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</b></p> <p>Երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքին մասնակցության մակարդակի բարձրացում, երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացում:</p>
	<p><b>Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի դերի կարևորում</b></p> <p><b>1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)</b></p> <p>Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, երեխաների առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում ու բարձրացում, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման բացահայտում և ձևավորում, ինչպես նաև խոստումնալից երեխաների ի հայտ բերում մանկապատանեկան մարզադպրոցների համար:</p> <p><b>2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը</b></p> <p>Նախադպրոցական տարիքի երեխաների և հանրակրթական դպրոցների 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտների ֆիզիկական ունակությունների բարելավում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում անցկացված սպորտյան խմբակներ, առողջության ամրապնդում, ուսումնական գործընթացին հիվանդության պատճառով բացակա երեխաների թվի նվազում:</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ